ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սոգիշոփի 1

№ 2719-Ա « 09 » հուլիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԱՅԳԵՍՏԱՆ 11-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ Հ.3/4 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԹՈՒՐ ՎԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ՎԱՀԱՆ ԱՐԹՈՒՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ԴԱՎԻԹ ԱՐԹՈՒՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արթուր Վանիկի Սարգսյանի (ծնված 11.05.1960թ.), Վահան Արթուրի Սարգսյանի (ծնված 03.12.1989թ.), Դավիթ Արթուրի Սարգսյանի (ծնված 23.07.1986թ.) դիմումը: Երևանի Նորք-Մարաշ Այգեստան 11-րդ փողոց 1-ին նրբանցք հ.3/4 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 674.47քմ, որից 404.4քմ մակերեսով հողամասը Արթուր Վանիկի Սարգսյանին, Վահան Արթուրի Սարգսյանին, Դավիթ Արթուրի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 17.12.2020թ. հ.17122020-01-0278 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 16.10.2024թ. հ.ԱՏ-16102024-01-1069, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 30.01.2025թ. հ.179 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 13.06.2025թ. հ.20-Ել-Ա-8831 եզրակացությունը, համաձայն որի Երևանի Նորք-Մարաշ Այգեստան 11-րդ փողոց 1-ին նրբանցք հ.3/4 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1.Վերականգնել Երևանի Նորք-Մարաշ Այգեստան 11-րդ փողոց 1-ին նրբանցք հ.3/4 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Արթուր Վանիկի Սարգսյանի, Վահան Արթուրի Սարգսյանի, Դավիթ Արթուրի Սարգսյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 404.4քմ մակերեսով հողամասին կից 270.07քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 270.07քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, ք.Երևան Նորք-Մարաշ Այգեստան 11-րդ փողոց 1-ին նրբանցք հ.3/4 հասցեում գտնվող 674.47քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ